ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ք. Երևան 08.09.2017թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի

թիվ ՍՑ-ԷՍ-2017/21

Հայաստանի Հանրապետության գնումների բողոքարկման խորհուրդը (այսուհետ՝ նաև Խորհուրդ)՝ ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 14.07.2017թ. թիվ 04/027-1/12886-17 գրությամբ «Ասատրյանս» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված պաշտոնական ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեց հետևյալը.

1. **<u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը</u>**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, «Կարեն Դեմիրճյանի անվան մարզահամերգային համալիր» ՊՈԱԿ-ի (այսուհետ՝ նաև Պատվիրատու) 06.07.2017թ. թիվ 21 գրության հիման վրա, 14.07.2017թ. ՀՀ գնումների բողոքարկման խորհրդում նախաձեռնել է «Ասատրյանս» ՍՊԸ-ին (այսուհետ՝ նաև Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում (այսուհետ՝ նաև Ցուցակ) ներառելու պաշտոնական ընթացակարգ:

ՀՀ ֆինանսների նախարարությունը պատշաճ ծանուցվել է Խորհրդում անցկացվող նիստերի ժամանակացույցի վերաբերյալ, սակայն նախարարության կողմից լիազորված որևէ ներկայացուցիչ չի ներկայացել:

2. «Կարեն Դեմիրճյանի անվան մարզահամերգային համալիր» ՊՈԱԿ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.

«Կարեն Դեմիրճյանի անվան մարզահամերգային համալիր» ՊՈԱԿ-ը 06.07.2017թ. թիվ 21գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հայտնելով հետևյալը.

««Կարեն Դեմիրճյանի անվան մարզահամերգային համալիր» ՊՈԱԿ-ի (այսուհետ՝ մարզահամերգային համալիր) և «Ասատրյանս» ՍՊԸ-ի (այսուհետ՝ ՍՊԸ) միջև 13.03.2017 թվականին կնքված ԿԴՄՀՀ-ՊԸԾՁԲ-17/2 ծածկագրով պետական գնման պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) համաձայն՝ մարզահամերգային համալիրը ՍՊԸ-ից ձեռք է բերելու հիմնական միջոցների գույքագրման համակարգ և գույքագրման ծառայությունների մատուցում՝ համաձայն պայմանագրի 1.1 կետի, ինչպես նաև պայմանագրի անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածի:

13.03.2017 թվականից մինչ օրս ՍՊԸ-ն չի ստանձնել պայմանագրով իրեն վերապահված պարտավորությունների կատարումը, այն է՝ պայմանագրի N 1 հավելվածով նախատեսված հիմնական միջոցների գույքագրման համակարգի տրամադրումը և այդ համակարգի միջոցով իրականացվող ծառայությունների մատուցումը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

Պայմանագրի 2.1.3 կետի համաձայն՝ Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված Ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է Ծառայության մատուցման ժամկետը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 466-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ պայմանագիրը լրիվ կամ մասնակի կատարելուց միակողմանի հրաժարվելու դեպքում, երբ պայմանագրից հրաժարվելը թույլատրվում է օրենքով կամ կողմերի համաձայնությամբ, պայմանագիրը համապատասխանաբար համարվում է լուծված կամ փոփոխված:

Հիմք ընդունելով նշված գնման ընթացակարգի պատասխանատու ստորաբաժանման առաջարկությունը և այն հանգամանքը, որ ՍՊԸ-ի կողմից խախտվել են պայմանագրով նախատեսված պարտավորությունները՝ մարզահամերգային համալիրը, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի և պայմանագրի դրույթներով՝ միակողմանի հրաժարվել է «Ասատրյանս» ՍՊԸ-ի հետ ԿԴՄՀՀ-ՊԸԾՁԲ-17/2 ծածկագրով կնքված գնման պայմանագրից, որի դեպքում պայմանագիրը ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 466-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն համարվում է լուծված:

Ելնելով վերոգրյալից՝ խնդրում եմ Ձեր հանձնարարականը ՀՀ ֆինանսների նախարարության համապատասխան ստորաբաժանմանը՝ ձեռնարկել անհրաժեշտ միջոցառումներ՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի շրջանակներում»:

Խորհրդում նախաձեռնված պաշտոնական ընթացակարգի քննության նպատակով տեղի ունեցած նիստերին մասնակցում էր «Կարեն Դեմիրճյանի անվան մարզահամերգային համալիր» ՊՈԱԿ-ի գլխավոր հաշվապահ Արման Աբրահամյանը:

3. <u>«Ասատրյանս» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

«Ասատրյանս» ՍՊԸ-ն 28.07.2017թ. Խորհրդին ուղղված էլեկտրոնային գրությամբ հայտնել է հետևյալը.

««Ասատրյանս» ՍՊԸ-ն 2017թ. մայիսի 17-ին բողոք-նամակով դիմել էր ՀՀ բարձրաստիճան տարբեր կառույցների՝ N ԿԴՄՀՀ-ՊԸԾՁԲ-17/2 ծածկագրով մրցույթի կազմակերպման, նշված ծածկագրով «Ասատրյանս» ՍՊԸ-ի հետ պայմանագիր կնքելու ընթացակարգի, Պատվիրատուի՝ Կ.Դեմիրճյանի անվան մարզահամերգային համալիր» ՊՈԱԿ-ի, պայմանագրի ապահովման գծով ղեկավարության գործողությունների գծով

որևէ պարզաբանումներ, առաջարկներ, կանխարգելող գործողություններ կամ որևէ դիտողություններ ստանալու ակնկալիքով: Մասնավորապես, բողոք-նամակը ուղարկվել է՝ ՀՀ ֆինանսների նախարար պարոն Վարդան Արամյանին, ՀՀ ԿԱ Պետական գույքի կառավարման վարչության պետ պարոն Արման Սահակյանին, ՀՀ Վերահսկիչ Պալատի նախագահ պարոն Լևոն Յոլյանին, ՀՀ Կառավարության աշխատակազմի ղեկավար պարոն Վահե Ստեփանյանին (ումից մինչ օրս պատասխան նամակ չենք ստացել):

Ցանկանում ենք նշել այն փաստը, որ մենք առ այսօր (25/07/2017թ.) դեռ չենք ստացել Պատվիրատուից ԿԴՄՀՀ-ՊԸԾՁԲ-17/2 ծածկագրով պայմանագրի մեր օրինակը:

Ի պատասխան ՀՀ ֆինանսների նախարարի տեղակալ պարոն Կարեն Թամազյանին հասցեագրված «Կ.Դեմիրճյանի անվան մարզահամերգային համալիր» ՊՈԱԿ-ի կողմից 06/07/2017թ.-ին (N 29944) ուղարկված նամակի, հայտնում ենք Ձեզ, որ Պատվիրատուի կողմից կատարված հայտարարությունները և միակողմանի պայմանագրի կատարումից հրաժարվելը հիմնավորված չէ: Մասնավորապես՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 781-րդ հոդվածով սահմանված է ծառայությունների վճարովի մատուցման պայմանագրի իրավական կարգավորումը, համաձայն որի՝ ծառայությունների վճարովի մատուցման պայմանագրի նկատմամբ կիրառվում են կապալի մասին ընդհանուր դրույթները (հոդվածներ 700-727) և կենցաղային կապալի մասին դրույթները (հոդվածներ 728-737), եթե դա չի հակասում սույն օրենսգրքի 777-780 հոդվածներին, ինչպես նաև ծառայությունների վճարովի մատուցման պայմանագրի առանձնահատկություններին:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Պայմանագիրը չի հակասում ՀՀ օրենսգրքի 777-780 հոդվածներին, ինչպես նաև ծառայությունների վճարովի մատուցման Պայմանագրի առանձնահատկություններին, ուստի Պատվիրատուն չի ապահովել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 716-րդ հոդվածի 1-ին կետը: Մասնավորապես, Պատվիրատուն Կատարողին խոչընդոտել է գույքագրման աշխատանքների կատարման գործում՝ չտրամադրելով համապատասխան իրավունք տարածքը մուտք անելու և գույքագրման աշխատանքներն իրականացնելու համար: «Կ.Դեմիրճյանի անվան մարզահամերգային համալիր» ՊՈԱԿ-ն ինքնին համարվում է կարևոր նշանակության օբյեկտ և մուտք գործելը Պատվիրատուի տարածք հնարավոր չէ առանց թույլտվության: Նշենք նաև, որ Պատվիրատուն, նշված ծառայությունների իրականացման շրջանակում,

պետք է ապահովեր առնվազն մեկ աշխատակից, ով լավ տեղյակ կլիներ նշված անվանացանկով գույքի գույքագրման և պիտակավորման համար: Առանց Պատվիրատուի համապատասխան աշխատակցի անհնար է մատուցել նշված ծառայությունները: Պատվիրատուն չի ապահովել համապատասխան աշխատակցով և մեզ անցագրեր չի տրամադրել՝ տարածք մուտք գործելու համար: Մենք փորձել ենք մուտք գործել տարածք, սակայն ապարդյուն: Անվտանգության աշխատակիցները թույլ չեն տվել՝ նշելով, որ պետք է ղեկավարության թույլտվությունը, ինչը մենք այդպես էլ չենք ստացել:

Ցանկանում ենք նշել, որ մենք չենք հրաժարվել և այժմ էլ չենք հրաժարվում պայմանագրով ստանձնած մեր պարտականությունների կատարումից: Սակայն մենք պատրաստ էինք (ենք) ստանձնելու պայմանագրային պարտականությունների կատարումն այն և միայն այն դեպքում, երբ մեզ կվերադարձնեն պայմանագրի մեր օրինակը՝ ստորագրված և կնքված, մեզ թույլտվություն կտան ազատ մուտք գործել տարածք և տրամադրել համապատասխան աշխատակից, որպեսզի կարողանանք կատարել պայմանագրով սահմանված աշխատանքները:

Պատվիրատուն՝ համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի, ինչպես նաև ՀՀ կառավարության 10.02.2011թ. թիվ 168-Ն որոշմամբ սահմանված պահանջների՝ ծանուցվել է Պայմանագիր ստորագրելու վերաբերյալ՝ կից ներկայացնելով համապատասխան նախագիծը, որը սահմանված ժամկետներում Կատարողի կողմից երկու օրինակից ստորագրվել և ներկայացվել է Պատվիրատուին: Սակայն, Պատվիրատուն առ այսօր չի տրամադրել Կատարողին համապատասխան Պայմանագրի օրինակը, ինչպես նաև խոչընդոտել է Կատարողին՝ իրականացնելու Պայմանագրով նախատեսված աշխատանքները:

Կատարողի աշխատակիցները՝ Ալբերտ Ասատրյանը և Ալեքսանդր Տրոհմանը 2017թ. մարտի 24-ին ներկայացել են Պատվիրատուի վարչական շենք՝ հաշվապահություն, հանդիպել են գլխավոր հաշվապահի հետ և ներկայացրել են ԿԴՄՀՀ-ՊԸԾՁԲ-17/2 ծածկագրով մրցույթի տեխնիկական նվազագույն պայմաններին բավարարող սարքը (նշենք, որ Կատարողի՝ «Ասատրյանս» ՍՊԸ-ի կողմից ներկայացրած սարքի տեխնիկական չափանիշները գերազանցում են մրցույթով սահմանված տեխնիկական բնութագրի չափանիշները): Կատարողի աշխատակիցները ցանկություն են հայտնել

աշխատանքները սկսելու նպատակով հանդիպել Պատվիրատուի տնօրեն Վ. Ասատրյանի հետ, սակայն գլխավոր հաշվապահը նշեց, որ տնօրենը չի ցանկանում հանդիպել մեզ հետ և հորդորեց սպասել, մինչև լինի տնօրենի համաձայնությունը:

Այնուհետև, նույն օրը Կատարողի աշխատակից Ալբերտ Ասատրյանը զանգահարել է Պատվիրատուի տնօրեն Վ. Ասատրյանին՝ ցանկություն հայտնելով հանդիպելու և ստանալու համաձայնություն և թույլտվություն գործը (աշխատանքները) սկսելու համար, սակայն Պատվիրատուի տնօրեն Վ. Ասատրյանը մերժել է՝ նշելով, որ չի ցանկանում աշխատել Կատարողի հետ և անջատել է հեռախոսը:

Կից հավելվածով Ձեզ ենք ներկայացնում ԿԴՄՀՀ-ՊԸԾՁԲ-17/2 ծածկագրով հրապարակված մրցույթի պահանջվող սարքի տեխնիկական նվազագույն պահանջները և «Ասատրյանս» ՍՊԸ-ի կողմից 2017թ. մարտի 24-ին գլխավոր հաշվապահի հետ հանդիպման ժամանակ ներկայացրած սարքի տեխնիկական պարամետրերը (չափորոշիչները), որտեղ ակնհայտ երևում է, որ «Ասատրյանս» ՍՊԸ-ի կողմից ներկայացրած սարքի համեմատական պարամետրերը (չափորոշիչները) ավելի հզոր են, քան ԿԴՄՀՀ-ՊԸԾՁԲ-17/2 ծածկագրով հրապարակված մրցույթով պահանջվածը:

Նշենք նաև, որ նույն օրը՝ 2017թ. մարտի 24-ին, Պատվիրատուի հետ հանդիպման ժամանակ, երբ քննարկվում էր մեր կողմից ներկայացրած սարքը, փոխանակ մեր կողմից ներկայացված սարքի տեխնիկական պարամետրերը համեմատվեր ԿԴՄՀՀ-ՊԸԾՁԲ-17/2 ծածկագրով հրապարակված մրցույթով սարքի տեխնիկական պահանջներին, այն համեմատվեց Պատվիրատուի գլխավոր հաշվապահի կողմից անհասկանալի վայրից արկղով (հավանաբար նոր վիճակի) բերված սարքի հետ, և պնդեց, որ ԿԴՄՀՀ-ՊԸԾՁԲ-17/2 ծածկագրով հրապարակված մրցույթով սարքը պետք է հենց այդպիսի արտաքինով սարք լինի:

Ցանկանում ենք նշել, որ մեր կողմից ներկայացված սարքը լիովին բավարարել է ԿԴՄՀՀ-ՊԸԾՁԲ-17/2 ծածկագրով հրապարակված մրցույթով պահանջվող սարքի տեխնիկական պահանջներին: Մեզ չի առաջարկվել սարքը փոխել, իսկ եթե առաջարվեր, ապա այն կմերժվեր մեր կողմից, քանի որ մենք արդեն իսկ (մինչև մրցույթի փաթեթների բացելը) ձեռք էինք բերել մեր կողմից առաջարկվող սարքը, որի համար մեր Ընկերությունը՝ «Ասատրյանս» ՍՊԸ-ն, ծախսել է բավականին մեծ գումար, որի դիմաց

նույնիսկ հատուցում չի ստացել: Ոլորտին ծանոթ մասնագետները գիտեն, թե որքան թանկ արժե այդ սարքը: Այն փաստը, որ մենք փաստացի ներկայացրել ենք համապատասխան սարքը, ուղղակի անտրամաբանական է մեր կողմից աշխատանքները չիրականացնելը, քանի որ մենք, որպես առևտրային ընկերություն, ակնկալում էինք շահույթ ստանալ մեր կատարած աշխատանքի դիմաց: ԿԴՄՀՀ-ՊԸԾՁԲ-17/2 ծածկագրով հրապարակված մրցույթում սարքի տեխնիկական պարամետրերի գծով նշված է միայն հետևյալը. RFID գրող/կարդացող սարք, RFID ինքնակպչուն պիտակների կիրառմամբ, ինքնակպչուն RFID Gen2 տեսակի պիտակներ, RFID գրող/կարդացող սարքի աշխատանքների և գույքագրման տվյալների փոխանակման ծրագրային ապահովում և այլն (նշված մրցույթի հայտարարության հավելված 1-ով): Այսինքն ավելի մանրամասն տեղեկատվություն՝ տեխնիկական պահանջներ նշված չեն եղել:

Նշենք նաև, որ մինչ օրս մենք միայն ծախսեր ենք կրել, և ոչ մի օգուտ չենք ստացել: Այս պահի դրությամբ, վերոնշյալ աշխատանքների գծով մեր ընկերությունը ունի վնաս:

Նշենք նաև, որ Ալեքսանդր Տրոհմանը չի հանդիսանում «Ասատրյանս» ՍՊԸ-ի ներկայացուցիչ: Նա հանդիսանում է Ռուսական այն Ընկերության ներկայացուցիչը, որից ձեռք էր բերվել այդ սարքավորումը: Եվ նշենք, որ, հաշվի առնելով այդ սարքի յուրահատկությունները, վաճառող ընկերության պայմանների մեջ է մտնում այն փաստը, որ տվյալ ապրանքը ձեռք բերելիս, այդ ընկերության ներկայացուցիչը գալիս է և տեղում ներկայացնում սարքը, ցույց տալիս աշխատելու նրբությունները և առավելությունները, և ոչ ավելին: Ի վերջո, ձեռք է բերվել սարք, որի արժեքը կազմում է մուտավորապես՝ 1,200,000 ՀՀ դրամ:

Ցանկանում ենք ֆիքսել այն փաստը, որ եթե ընդունենք այն վարկածը, որ Կատարողը ուղղակի չի կատարել աշխատանքը, և Պատվիրատուի կողմից չեն եղել խոչընդոտներ, ապա պայմանագրի ամբողջ ժամանակահատվածի ընթացքում (ծառայությունների մատուցման ողջ ժամանակահատվածի ընթացքում) Պատվիրատուն ոչ մի քայլ չի ձեռնարկել՝ հեռախոսային զանգ, նամակ, Կատարողի գրասենյակ այցելություն և այլն, Կատարողի հետ կապ հաստատելու և պարզելու աշխատանքները չկատարելու պատճառները: Սովորաբար գործարար պրակտիկայում կողմերը համագործակցում են և խնդիրները նախ և առաջ փորձում են պարզել միմյանց միջև: Համաձայնության չգալու

դեպքում նոր դիմում են այլ քայլերի: Սա ևս մեկ անգամ վկայում է այն փաստ ի մասին, որ Պատվիրատուն ակնհայտ խոչընդոտել է Կատարողի կողմից նշված ծածկագրի շրջանակներում աշխատանքների կատարմանը:

Ելնելով վերոգրյալից՝ Կատարողը հայտնում է, որ Պատվիրատուի կողմից կատարված հայտարարությունները և միակողմանի պայմանագրի կատարումից հրաժարվելը հիմնավորված չէ: Մասնավորապես.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 781-րդ հոդվածով սահմանված է Ծառայությունների վճարովի մատուցման պայմանագրի իրավական կարգավորումը, համաձայն որի՝ Ծառայությունների վճարովի մատուցման պայմանագրի նկատմամբ կիրառվում են կապալի մասին ընդհանուր դրույթները (հոդվածներ 700-727) և կենցաղային կապալի մասինդրույթները (հոդվածներ 728-737), եթե դա չի հակասում սույն օրենսգրքի 777-780 հոդվածներին, ինչպես նաև ծառայությունների վճարովի մատուցման պայմանագրի առանձնահատկություններին:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Պայմանագիրը չի հակասում ՀՀ օրենսգրքի 777-780 հոդվածներին, ինչպես նաև ծառայությունների վճարովի մատուցման Պայմանագրի առանձնահատկություններին, ուստի Պատվիրատուն չի ապահովել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 716-րդ հոդվածի 1-ին կետը: Մասնավորապես, Պատվիրատուն Կատարողին խոչընդոտել է գույքագրման աշխատանքների կատարման գործում՝ չտրամադրելով համապատասխան իրավունք տարածքը մուտք անելու և գույքագրման աշխատանքներն իրականացնելու համար:

Ուստի, համաձայն ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 717-րդհոդվածի 1-ին կետի՝ Կատարողը իրավունք ունի աշխատանքը չսկսել, իսկ սկսած աշխատանքը՝ դադարեցնել:

Ելնելով վերոգրյալ հանգամանքներից, և հաշվի առնելով այն հանգամանքը, որ Կատարողը, համաձայն ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 717-րդ հոդվածի 2-րդ կետի, իրավունք ունի հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել հատուցելու վնասները՝ իր իրավունքների պահանջ չի ներկայացրել՝ ցանկանալով առաջացած խնդիրը լուծել բարիդրացիական և պրոֆեսիոնալ հարթության մեջ, առաջարկում ենք հետևյալը.

Առոչինչ ճանաչել Պատվիրատուի 17.05.2017թ. հայտարարությունը, ստորագրել համաձայնագիր Կատարողի հետ նոր ժամկետի սահմանման վերաբերյալ, ապահովել

համապատասխան պայմաններ ստանձնած պարտավորությունները պատշաճ կատարելու համար՝ տրամադրելով աշխատակիցներ գույքագրվող գույքը ներկայացնելու համար, ինչպես նաև տրամադրել իրավունք Պատվիրատուի տարածք անխոչընդոտ մուտք գործելու համար: Քանի որ Պատվիրատուի տարածքը փակ է և խիստ հսկվող, ուստի անհրաժեշտ է տրամադրել նաև Կատարողի աշխատակիցներին անցագրեր»:

Խորհրդում նախաձեռնված պաշտոնական ընթացակարգի քննության նպատակով տեղի ունեցած նիստերին մասնակցում էր «Ասատրյանս» ՍՊԸ-ի փոխտնօրեն Ալբերտ Ասատրյանը:

4. **<u>ՍՑ-ԷՍ-2017/21 պաշտոնական ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը, Խորհրդի հիմնավորումները և եզրահանգումը.</u>**

Խորհուրդն ուսումնասիրել է ՀՀ ֆինանսների նախարարության 14.07.2017թ. թիվ 04/027-1/12886-17 գրությունը, «Կարեն Դեմիրճյանի անվան մարզահամերգային համալիր» ՊՈԱԿ-ի 06.07.2017թ. թիվ 21 գրությունը, «Կարեն Դեմիրճյանի անվան մարզահամերգային համալիր» ՊՈԱԿ-ի և «Ասատրյանս» ՍՊԸ-ի միջև 13.03.2017թ. կնքված N ԿԴՄՀՀ-ՊԸԾՁԲ-17/2 ծածկագրով պետական գնման պայմանագիրը, «Կարեն Դեմիրճյանի անվան մարզահամերգային համալիր» ՊՈԱԿ-ի՝ «Ասատրյանս» ՍՊԸ-ին 10.04.2017թ. ուղղված ծանուցումը, «Ասատրյանս» ՍՊԸ-ի կողմից ՀՀ ֆինանսների նախարարին ուղղված դիմում-բողոքը և վերջինիս վերաբերյալ Պատվիրատուի 05.05.2017թ. ՀՀ ֆինանսների նախարարությանը հայտնած դիրքորոշումը, պատվիրատուի՝ «Ասատրյանս» ՍՊԸ-ին ուղղված՝ կնքված պայմանագիրը միակողմանի լուծելու մասին 17.05.2017թ. թիվ 13 գրությունը, Պատվիրատուի հայտնած կարծիքը և դիրքորոշումը.

«Կարեն Դեմիրճյանի անվան մարզահամերգային համալիր» ՊՈԱԿ-ի և «Ասատրյանս» ՍՊԸ-ի միջև 13.03.2017թ. կնքվել է N ԿԴՄՀՀ-ՊԸԾՁԲ-17/2 ծածկագրով պետական գնման պայմանագիր (այսուհետ՝ նաև Պայմանագիր):

Պայմանագրի 1.1 կետի համաձայն՝ Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է հիմնական միջոցների գույքագրման իրականացման համակարգի ձեռքբերման և գույքագրման ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ Ծառայություն)՝ համաձայն նույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող N1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

Պայմանագրի 1.2 կետի համաձայն՝ Ծառայությունը մատուցվում է նույն պայմանագրի N1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներում:

Պայմանագրի 2.1.3 կետի համաձայն՝ Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել Պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է նույն Պայմանագիրը: Կատարողի կողմից խախտումն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում N1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է Ծառայության մատուցման ժամկետը:

Պայամանգրի N1 հավելվածով նախատեսված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի համաձայն՝ Ընկերությունը պարտավորվել է Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից (13.03.2017թ.) մինչև Պայմանագրի ավարտը՝ 15.05.2017թ. Պատվիրատուին տրամադրել հիմնական միջոցների գույքագրման համակարգ և այդ համակարգի միջոցով իրականացնել գույքագրման ծառայությունների մատուցում:

Պատվիրատուն 17.05.2017թ. թիվ 13 գրությամբ դիմել է «Ասատրյանս» ՍՊԸ-ին և հայտնել, որ հիմք ընդունելով գնման ընթացակարգի պատասխանատու ստորաբաժանման առաջարկությունը և այն հանգամանքը, որ Ընկերության կողմից խախտվել են պայմանագրով նախատեսված պարտավորությունները՝ մարզահամերգային համալիրը՝ ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի և պայմանագրի դրույթներով՝ միակողմանի հրաժարվում է «Ասատրյանս» ՍՊԸ-ի հետ ԿԴՄՀՀ-ՊԸԾՁԲ-17/2 ծածկագրով կնքած գնման պայմանագրից, որի դեպքում պայմանագիրը ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 466-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն համարվում է լուծված:

Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին ծանուցումը գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով հրապարակվել է նաև տեղեկագրում:

Պաշտոնական ընթացակարգի քննության նպատակով Խորհրդում կայացած նիստի ժամանակ Ընկերության ներկայացուցիչը հայտնեց, որ Պատվիրատուն ծանուցել է Պայմանագիրն ստորագրելու վերաբերյալ՝ կից ներկայացնելով համապատասխան նախագիծը, որը սահմանված ժամկետներում Ընկերության կողմից երկու օրինակից ստորագրվել և ներկայացվել է Պատվիրատուին: Սակայն, ըստ Ընկերության ներկայացուցչի, Պատվիրատուն տվյալ պահի դրությամբ Ընկերությանը չի տրամադրել համապատասխան Պայմանագրի օրինակը, ինչպես նաև խոչընդոտել է Ընկերությանը իրականացնելու Պայմանագրով նախատեսված աշխատանքները՝ չտրամադրելով վերջինիս Պատվիրատուի տարածք մուտք գործելու անցագիր:

Պատվիրատուի ներկայացուցիչը հակադարձեց վերը նշված պնդմանը՝ հայտելով, որ Ընկերությանը Պատվիրատուի տարածք մուտք գործելու համար որևէ խոչընդոտ չի եղել, իսկ Պատվիրատուի աշխատակցի կողմից կնքված պայմանագրի Ընկերության օրինակը առձեռն հասցվել է Ընկերության հասցեով, սակայն Ընկերության ներկայացուցիչը հրաժարվել է ստանալ պայմանագրի իր օրինակը: Որից հետո Պատվիրատուն 10.04.2017թ. կրկին ուղարկել է պայմանագրի օրինակը սակայն Ընկերության ներկայացուցիչը կրկին հրաժարվել է այն վերցնելուց:

Պատվիրատուն 10.04.2017թ. թիվ 08 գրությամբ ծանուցել է Ընկերությանը հայտնելով հետևյալը.

«2017թ. ապրիլի 10-ին ժամը 12:00-ի սահմանում ՊՈԱԿ-ի աշխատակից Տիգրան Վարդանյանի կողմից, Կատարողի ցանկությամբ, 2017թ. մարտի 13-ին կնքված պետական գնման պայմանագրի Կատարողի օրինակը առձեռն հասցվել է ՀՀ, ք. Երևան, Նալբանդյան 48/1, 5-րդ հարկ հասցեում գտնվող «Ասատրյանս» ՍՊԸ, որտեղ Կատարողի ներկայացուցիչը հրաժարվել է ստանալ պայմանագրի իր օրինակը: Պայմանագրի Ընկերության օրինակը գտնվում է ՀՀ, ք. Երևան, Ծիծեռնակաբերդի զբոսայգի 1 հասցեում, Կ. Դեմիրճյանի անվան մարզահամերգային համալիրում՝ ՄՀՀ գնումների համակարգող Օլգա Սահակյանի մոտ: Յուրաքանչյուր աշխատանքային օր, ժամը 10:00-

ից մինչև 17:30-ը կարող եք մոտենալ նշված հասցեով և ստանալ Պայմանագրի Ձեր օրինակը:»:

Խորհրդի այն հարցին, թե արդյոք Ընկերությունը ստացել է նշված ծանուցումը, Ընկերության ներկայացուցիչը հայտնեց, որ ստացել է և Խորհրդին ներկայացրեց ստացված ծանուցումը:

Խորհրդի այն հարցին, թե արդյոք Պայմանագրով սահմանված՝ Ծառայության հանձնման և ընդունման կարգի համաձայն, Պայմանագրի արդյունքը Պատվիրատուին է հանձնվել, և հանձնելու փաստը ֆիքսվել է երկկողմ հաստատված փաստաթղթով, Ընկերության ներկայացուցիչը հայտնեց, որ նման փաստաղթուղթ Պայմանագրի կողմերի միջև չի ստորագրվել:

Պատվիրատուի ներկայացուցիչը Խորհրդին հայտնեց նաև, որ ընդամենը ոմն Ռուսաստանի Դաշնության քաղաքացի Պատվիրատուին է ներկայացրել օգտագործված սարք և ներկայացել է որպես ռուսական ընկերության ներկայացուցիչ, ում և պատկանել է նշված սարքը՝ փորձելով Պատվիրատուին ներկայացնել նշված սարքի տեխնիկական հատկանիշները և օգտագործման հնարավորությունները, սակայն Պատվիրատուն հրաժարվել է ներկայացված առաջարկից, քանի որ վերջինս չի հադիսացել «Ասատրյանս» ՍՊԸ-ի աշխատակից, ով լիազորված է Պայմանագրով նախատեսված ծառայությունը մատուցելու համար:

Բացի այդ Պատվիրատուի ներկայացուցիչը նշեց նաև, որ Պայմանագրի կողմ չհանդիսացող՝ երրորդ անձի կողմից Պայմանագրի կատարումը ըստ Պատվիրատուի կհանգեցներ գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ նախատեսված խախտումների և հետևանքների:

Այսպիսով, Խորհուրդն արձանագրում է, որ «Ասատրյանս» ՍՊԸ-ն կնքել է «Կարեն Դեմիրճյանի անվան մարզահամերգային համալիր» ՊՈԱԿ-ի հետ «ԿԴՄՀՀ-ՊԸԾՁԲ-17/2» ծածկագրով գնման պայմանագիր, սակայն չի մատուցել Պայմանագրով նախատեսված ծառայությունը, ինչը հանգեցրել է Պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ

(կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

Օրենսգրքի 466-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ պայմանագիրը լրիվ կամ մասնակի կատարելուց միակողմանի հրաժարվելու դեպքում, երբ պայմանագրից հրաժարվելը թույլատրվում է օրենքով կամ կողմերի համաձայնությամբ, պայմանագիրը համապատասխանաբար համարվում է լուծված կամ փոփոխված:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ նաև Օրենք) 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե հայտը ներկայացնելու պահին նախորդող տարվա ընթացքում ավելի քան մեկ անգամ խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Խորհուրդը գտնում է, որ «Ասատրյանս» ՍՊԸ-ն պայմանագրով նախատեսված ծառայությունը սահմանված ժամկետում չմատուցելով՝ խախտել է պայմանագրի 1.1 կետով ստանձնած պարտավորությունը:

Խորհուրդն արձանագրում է նաև, որ «Ասատրյանս» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից Խորհրդին ներկայացված պաշտոնական ընթացակարգով առկա չէ որևէ տեղեկատվություն կամ ապացույց այն մասին, որ Ընկերությունը հայտը ներկայացնելու նախորդող տարվա ընթացքում թույլ է տվել Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով սահմանված որևէ խախտում:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Խորհուրդը գտնում է, որ «Ասատրյանս» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքեր առկա չեն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասով, 48-րդ հոդվածի 6-րդ մասի 7-րդ կետով՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 14.07.2017թ «Ասատրյանս» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով Խորհրդում նախաձեռնված պաշտոնական ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի անդամ՝ **ԷՄԻԼ ՍԱՐԳՍՅԱՆ**